

ԱԽՈՒԹ ԱՐՑԻՎԵՏԱԿԵՐՆ ԽՈՐՀԻԴԱՅԻՆ ՀԵՆՐԵՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊԵՐԵՏԱԿԵՐՆ ԲԱԼՅ յԵՐԿՐՅԵՐԻ, ԺԻՎԵՐ

ՔԱՂՋԱԳԱՎԱՆ ԼՈՒՍԱՎ ԱՐԱԽԵՑՈՆ ԳԼՈՎԱՐ  
№ 14 ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ № 14

ԶՈՒՑԱ

ԿԱՏԱՐՈՒԴՈՒՄ

ԱԳԻՑ-ՊԻԵՍ Յ ԳՈՐԾ.

Թ. ԱՐԳ. Ս Ի Մ Ա Կ

891.71

2 - 15

Օ Կ Ե Վ Ա Մ 6 1924

25 NOV 2011

22 JUN 2007  
801h6

ՀԱՅՈՒԹԵՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԳԵՆԻՆ ՀԵՆՐԵՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

111

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈԽՍՁՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԼՈԱՎՈՐ  
№ 14 ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ № 14

գ. ԶԱԼԱՅԻ

1002  
5499

ԱԳԻՏ-ՊԻԵՍ Յ ՊՈՐԵ

Թարգմ. ՍԻՄՈՆ

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ԿԱՏՅԱ ԶՈՒԴՈՎԱ.
2. ԶՈՒԴՈՎ — Նրա հայրը.
3. ՍԱՎԵԼՄԿԻ — Ցերաժիշտ—յերիտասարդ պրոֆեսոր.
4. ՍԱՇԱ.
5. ԻԳՆԱՏ
6. ՆԱՍՏՅԱ
7. ՆԱԴՅԱ
8. ԹԵԶԻ
9. ԱՍՏՐԱԽԱՆՑԵՎ
10. ԼԱՆԴԵ
11. ԼԱԼԱ
12. ՆԵԺԻՆԱ
13. ՑԱՐՈՎ
14. ԲԱԲՈՒՃԿԻ
15. ՏԱՐԱՄՈՎՆԱ — Սավելսկու աղախինը.
16. Բանվորներ և բանվորուհիներ.

Կուսակցական աշխատողներ.  
Դերասաններ և գեղարվեստին  
ծառայողներ.

Թույլատրված և գ. Ք. Հ. Ա.

Անցքը պատահում է 1919 թվին.

Ա. ԳՈՐԾ.

Կատյայի սենյակը։ Զմոան յերեկո յե։ Կատյան մշտնում ե մուշտակը հազին։ Հանվում ե յեվ թիթեղյա վառարանի մոտ ձեռքերը տաքացնուա։ Յետեվից մննում ե հայրը։

Չուդով — Սաշկան յեկավ։ Զութակդ բերեց։

Կատյա — Ի՞նչ ես ասում։ Ի՞նչպես Սաշան։

Չուդով — Հա, ինքը։ Դե, վաղել եր պրոֆեսորի մոտ։

Կատյա — Ինչու։ Սավելսկին ինքը կբերեր։ Ուր ե ջութակը։

Չուդով — Լավ, առաջ հաց կեր, թեյ խմիր։ Սպասելով ամբողջ փայտը վառեցի։

Կատյա — Դե, քեզ հետ ի՞նչ վիճեմ... (թեյ ե խմում)։ Բայց ուր ե ջութակը։

Չուդով — Ե՞ն... Զահլես գնաց եդ քո յերաժշտությունից։ ճամփից դուրս բան ե դա (Կատյան վերցը նում ե լրագիրը)։ Միքիչ առաջ գավառից գեղջկուհիներ եյին յեկել։ Քեզ եյին հարցնում։ Ասըմ են նա որենք ա գրում, թե մենք կնանիքը վոնց պտի նոր կյանքով ապրենք։ Իրանց իրավունքն են ուզում իմանալ։ Հարցնում եմ, ի՞նչ իրավունք, նրանք թե՝ ասպելու։ Ապելու իրավունք, ախ, սատանան տանի, ապրելու։ բա դուք չեք ապրում, հարցնում եմ։ Հարցը ըստ աղջկանդ։ Ա՛յ խայտառակություն։

Կատյա — Ի՞նչ ե խայտառակությունը։

Չուդով — Ե՛, ենպես։ Աստված վկա։ Գոնե հորդ ծերությանը խնայիր։ Զե, բան չունիս, որենքներ ա գրում։

Կատյա — Ե՛, յես քեզ ի՞նչ եմ արել։ Ի՞նչ ես մըռմըռում։ (Զութակն ե դիտում)։

Չուդով — Կոմիտետից չունգուրիդ ես վազում, նըրանից սրան։ Ել բան ու գործ չկա. կյանքը ե սա. վատ բան չկա քեզ համար... կուսակցական...։

Կատյա — Հիմար։ Ա՛յ հենց ամբողջ կյանքը դա յե. կուսակցական եմ. ի՞նչ մի վատ բան կա այդտեղ։ Դեռ բանվոր ել ե։

Չուդով — Յես ի՞նչ բանվոր եմ. նախկին։

Կատյա — Երս-պրոլետար։

Չուդով — Վ՞նց ասացի՞ր (Կատյան ծիծաղում ե)։ Ե՛, դու յել մի գլուխ վազվզում ես։ Շուտով փող կստանաս։

Կատյա — Փող չկա։

Չուդով — Ինչե՞ր ես ասում։ Ուրիշներն ստանում են. Ցնորտ ե, իսկի փետ չունինք, գոնե տունը տաքացնենք... Ե՞ն, միթում պատասխանատու ել ե... (Դուռը ծեծում են)։ Մտիր, ով ե։

Կատյա — Ա՛, Սաշկա, բարև։

Սաւա — Ենպես, ճամփու վրա յեր, մտա։

Չուդով — Վոնց վոր հարբեցողը արաղը բերանից վերև չի տանում, ենպես ել դու տան մոտով չես անցնում, առանց մտնելու։

Սաւա — Ճիշտ ե, քեռի, ճիշտ։ Թող մի համբուրեմ բեզ, վոր ճիշտ ես խոսում։

Չուդով — Կորի, հիմար։

Կատյա — Ծիծաղեցրու նրան հենց ապրես. հարձակվում ե վրասի... հանգստություն չի տալիս։

Չուդով (Սաշային) — Հեռու գնա... հանգստանալ... . . . Ես եմ . . . ում համար եմ չարչարվում, մի ասա տեսնեմ . . . Շատ բան ե հարկավոր ինձ։ Ա՛յ, դու յես, վոր պատուած շորերով վազվզում ես ցրտովը, անձրեկ տակ. և եդ բոլորը կուսակցության համար։ Իսկ նրանք

բեղ ի՞նչ են տալիս: Կաշիդ մաշկում են վոս-  
կըրներիցդ: Յեկ բոլորը հենց ենպես, ձրի: Հո-  
գիդ հանում են և չեն վարձատրում:

Կատյա — Առուտուր անելու տեղ չի:

Չուդով — Մյուս կուսակցականները տես վհնց են  
ապրում: Այ, դու, . . . կես գրվանքա հացի ծա-  
ռայող . . . Շաբաթը յերկու անգամ մի կոպե-  
կի հաց:

Սաւա — Լավ, լավ, ծերուկ. սովածությունից զկըռ-  
տում ես, ի՞նչ ե:

Չուդով — Այ, դու գալիս ես նրա մոտ. դրանից  
ի՞նչ ոգուտ:

Սաւա — Այ թե վորտեղ խփեց:

Կատյա — Լոիր, հայրիկ:

Չուդով — Կուեմ, մի վախենար. Գնում եմ: Մարդ  
ուղղակի ցավում ե. Փաբրիկից հանեցի, հետ  
յեկավ. Տվեցի, վոր ուսում սովորի—նա չոնքուր  
ե ածում—դեռ պըռֆեսորի հետ ել սազ ու  
բազ ա սարբել:

Կատյա — Հայրիկ, դուրս գնա:

Չուդով — Թո՛ւ, արդեն դուրս ե անում:

Սաւա — Գնանք, քեռի, հանգստացիր, սիրելիս: Ա-  
րյունդպղտորում ես: Կատյային նեղացնում ես:

Չուդով — Յեկ կդնամ: Միայն տանել չեմ կարող. . .  
Ենտեղ կուսակցությունը, եստեղ եղ ջութակը,  
մի տեղ ես բուրժույը.—Փրանտի մեկն ե. . .  
Ամեն ինչ նրա համար, իսկ հոր համար—վոչինչ:  
Շնորհակալ եմ, աղջիկս (Սաշայի հետ գնում ե.  
Կատյան վերցնում ե ջութակը յեկ կամաց նվազում ե:  
Սաշան մտնում յեկ լսում ե):

Կատյա — Դու Սավելսկու մնա եյիր:

Սաւա — Այն, նա կգա քեզ մոտ:

Կատյա (նվազում ե, հետո մտածմունքի մեջ ե ընկնում) —  
Յերբ:

Սաւա — Եսոր: Շատ ես սպասում նրան:

Կատյա — Զե, չե, յես ջութակի մասին եմ ասում:  
Շատ լավ ե լարել... շատ ուրախ եմ:

Սաւա — Դու վերջերս անձանաչելի յես դարձել:

Կատյա — Ի՞նչ կա վոր, ինձ ճանաչում եյիք իբրև  
կուսակցական... Բայց, բացի դրանից, յես...  
ջութակահար ել եմ:

Սաւա — Դա դեռ մեծ ցավ չե... Ե՞ն, դե լավ, մեր  
գործը չե: Ջութակի մասին խոսիր:

Կատյա — Ե՞ն, Սաշկա, յեթե ժամանակ ունենայի,  
ջութակը ձեռքից ցած չեյի դնիլ. Բայց յես  
չափազանց, չափազանց շատ եմ մերվել կու-  
սակցության հետ... չեմ կարող գործը թողնել  
հեռանալ...

Սաւա — Ինչո՞ւ: Վհրտեղից ե քեզ...

Կատյա — Զե, առանց կոմիտեյի, առանց Փաբրիկայի  
յես կիթեմ, աստված վկա:

Սաւա — Արժե յերդվել:

Կատյա — Ծաղրածու, յես իմ ջութակին պակաս չեմ  
սիրում: Յերբեմն այնպիսի թախիծ ե համա-  
կում հոգիս, գիտես, յերբեմն մտածում եմ  
ամեն ինչ թողնել, ամեն ինչ նվիրել իմ ջու-  
թակին: Բայց... քիչ են պատահում այդպիսի  
ըոպեներ: Մեր շուրջը այնպիսի վառվառուն կյանք  
կա, վոր ուշըի գալ չի լինում... քաշում ե դե-  
պի ինքը... Յեկ ամեն ինչ, ամեն ինչ կոչնչա-  
նար հանուն մեր կոմմունայի... Ես ի՞նչ զար-  
մանալի բան ե... կուսակցություն, հեղափո-  
խություն և ջութակ: Կարծես բոլորը նույնն ե...  
Բայց քաշում են:

Նասյա (մտնելով) — Վոչ մի կերպ չեմ կարող հաշ-  
տվել քո չոնքուրի հետ: Թող կորչի ե: Բարե,

Սաշկա: Սառա (տաքանում ե):

Կատյա — Գործարանից ես գալիս:

Նասյա — Ապա ել վհրտեղից: Հո համերգի չեմ վա-  
ղելու: Թեյ ունի՞ս (թեյ ե լցնում): Բայց գիտե՞ս,

Կատյուշա, հիանալի ժողով եր: «Պարիզի Կոմմունան» եյին կարդում: Իգնատը այնպես եր բացատրում բանվորներին, վոր իր ամբողջ հոգին հանդես եր բերում: Կիրակի որը քո զեկուցումն ե: Հո չե՞ս մոռացել:

Կատյա — Հիշում եմ, իհարկե հիշում եմ:

Նասյա — Կանանց հարցի մասին: Բանվորուհիները սպասում են. նրանք սիրում են քեզ, Կատերինա:

Կատյա — Ճիշտ ե, չե՞: Իսկ Սաշկան դեռ ծիծաղում ե: — Փիս: Իսկ յես, յես բանվորուհիների մեջ այնպես եմ զգում ինձ, ինչպես ձուկը ջրումը... Միայն այդ միջոցին եմ ապրում յես:

Սաւա — Իսկ զութակդ:

Նասյա — Զութակն ի՞նչ ե: Յերեսառածություն ե: Այժմ բավականություն ստանալու ժամանակ չե: Դենիկինը գալիս ե: (Կատյան վերցնումն ջութակը յեվ «Մարսելյոզ» ե նվազում): Դե, դե, շողոքորթություն մի անիր: Ինչ ոյինբաղն ե եղ քո յերաժշտությունը:

Կատյա — Նա իմը չե, միայն յես ու նա ամեն ինչ ենք (մտնում ե Զուդովը, նրա յետեվից հզնատն ու նայան):

Զուդով — Այ քո կոմիտեները յեկան: Ելի կակսեք ձեր գործերի մասին: Դե, խղճացեք եղ աղջըկանը. առանց այն ել, ձեր գործերից, կաշին ու վուկրներն են մնացել: Կատյայի մասին ել պետք ե մտածել... Տանջեցիք:

Կատյա — Դե, բավական ե, ծերուկ (համբուրում ե): Նադյա — Ինչ ե յեղել, ընկեր: Մենք մտանք տաքանալու, հանգստանալու:

Զուդով — Ճանաչում եմ ձեզ — տաքանալու. (Կատյային) դե, նրանց համար թեյ յեփիք ելի (զնում ե):

Նադյա — Բարի, բայց ծերությունից լեզուն քոր ե գալիս (թեյամանը վերցնում ե, զնում ջրի):

Իգնաս — Նվազնում եյիք:

Կատյա — Այն, զութակս բերել են:

Իգնաս (Զեռք ե տալիս գործիքին) — Լավ բան ա, այսիրոնւմ եմ, բայց սպանես ել, բան չեմ հասկանում: Սոսկալի սիրում եմ, ինչպես և ձեզ (Կատյան ծիծաղում ե):

Նադյա — Իգնատ, ինչո՞ւ յես դու Կատյուշայի հետ հոգնակի խոսում:

Սաւա — Առաջ յեզակի յեր խոսում: Իգնատը կոտրատվում ե:

Իգնաս — Զեմ ուզում: միտքս փոխեցի: Կատյան հիմի ոտարի պես ե:

Կատյա — Եղ վհնց եմ յես ձեզ համար ոտար: Մեզ վոչ մի բան իրարից չի հեռացնում:

Սաւա — Զութակը...

Իգնաս — Վոչ, պրոֆեսորը (Կատյան շուտ ե զալիս, ինտո կորուկ կերպով)...

Կատյա — Պրոֆեսորն եստեղ գործ չունի — և ընդհանրապես ում ինչ գործն ե:

Իգնաս — Իհարկե, իմ գործը չե...

Կատյա — Իգնատ...

Նադյա — Կատյուշա, դու մի վիրավորվիր, միայն բո Սավելսկին...

Կատյա — Ի՞մ:

Նադյա — Ե՞ն, վոչ թե քն, գրողը տանի: Մի խոսքով եղ գիտնականը մեզ բոլորիս շփոթեցնում ե: Ի՞նչ մարդ ե: Վոչ կաղետ ե, վոչ մենշեկիկ... բուրժուական ինտելլիգենտ... բեզ հետ բարեկամացել ե և մեր կոմմունայից քեզ գուրս ե կորզում: Զայրացուցիչ ե, հասկանում ես... Չե՞ վոր վոչ մի կապ չկա մեր և նրա մեջ: Ոտար ե: Թշնամի յե նա... (Նաստյան թեյամանը դնում ե կըակին):

Նասյա — Եղ ում մասին ես խոսում: Եղ Սավելսկու:

Կատյա — Եղ թողնենք, ընկերներ:

Կատյուշա, հիանալի ժողով եր: «Պարիզի կոմմունան» եյին կարում: Իգնատը այնպես եր բացատրում բանվորներին, վոր իր ամբողջ հոգին հանդես եր բերում: Կիրակի որը քո գեկուցումն ե. հո չես մոռացել:

Կատյա — Հիշում եմ, իհարկե հիշում եմ:

Նասյա — Կանանց հարցի մասին: Բանվորուհիները սպասում են. նրանք սիրում են քեզ, կատերինա:

Կատյա — Ճիշտ ե, չե. իսկ Սաշկան դեռ ծիծաղում ե. — Փիս: Իսկ յես, յես բանվորուհիների մեջ այնպես եմ զգում ինձ, ինչպես ձուկը ջրումը... Միայն այդ միջոցին եմ ապրում յես:

Սաշա — Իսկ ջութակդ:

Նասյա — Ջութակն ի՞նչ ե: Յերեսառածություն ե:

Այժմ բավականություն ստանալու ժամանակ չե: Դեմիկինը գալիս ե: (Կատյան վերցնումն ջութակը յեվ «Մարսելոց» և նվազում): Դե, դե, շողորորթություն մի անիր: Ինչ ոյինքան ե եղ քո յերաժշտությունը:

Կատյա — Նա իմը չե, միայն յես ու նա ամեն ինչ ենք (մտնում ե Չուլովը, նրա յետեվից հզնատն ու նայան),

Չուլով — Այ քո կոմիտեները յեկան: Ելի կակսեր ձեր գործերի մասին: Դե, խղճացեք եղ աղջը-կանը. առանց այն ել, ձեր գործերից, կաշին ու վուկրներն են մնացել: Կատյայի մասին ել պետք ե մտածել... Տանջեցիք:

Կատյա — Դե, բավական ե, ծերուկ (համբուրում ե):

Նայա — Ի՞նչ ե յեղել, ընկեր: Մենք մտանք տաքանալու, հանգստանալու:

Չուլով — Ճանաչում եմ ձեզ — տաքանալու. (Կատյային) դե, նրանց համար թեյ յեփիր ելի (զնում ե):

Նայա — Բարի, բայց ծերությունից լեզուն քոր ե դալիս (թեյամանը վերցնում ե, զնում ջրի):

Իգնաս — Նվազնում եյիք:

Կատյա — Այն, ջութակս բերել են:

Իգնաս (Զեռք ե տալիս գործիքին) — Լավ բան ա, այսիրում եմ, բայց սպանես ել, բան չեմ հասկանում: Սոսկակի սիրում եմ, ինչպես և ձեզ (Կատյան ծիծաղում ե):

Նայա — Իգնատ, ինչո՞ւ յես դու կատյուշայի հետ հոգնակի խոսում:

Սաշա — Առաջ յեզակի յեր խոսում: Իգնատը կոտրատվում ե:

Իգնաս — Զեմ ուզում. միտքս փոխեցի, կատյան հիմի ոտարի պես ե:

Կատյա — Եղ վհնց եմ յես ձեզ համար ոտար: Մեզ վոչ մի բան իրարից չի հեռացնում:

Սաշա — Ջութակը...

Իգնաս — Վոչ, պրոֆեսորը (Կատյան շուր ե զալիս, հետո կտրուկ կերպով)...

Կատյա — Պրոֆեսորն եստեղ գործ չունի — և ընդհանրապես ում ինչ գործն ե:

Իգնաս — Իհարկե, իմ գործը չե...

Կատյա — Իգնատ...

Նայա — Կատյուշա, դու մի վիրավորվիր, միայն քո Սավելսկին...

Կատյա — Ի՞մ:

Նայա — Ե՞ն, վոչ թե քն, գրողը տանի: Մի խոսքով եղ գիտնականը մեզ բոլորիս շփոթեցնում ե:

Ի՞նչ մարդ ե: Վոչ կաղետ ե, վոչ մենշեկի... բուրգուական ինտելիգենտ... քեզ հետ բարեկա-

մացել ե և մեր կոմմունայից քեզ դուրս ե կորզում: Զայրացուցիչ ե, հասկանում ես...

Չե վոր վոչ մի կապ չկա մեր և նրա մեջ: Ոտար ե: Թշնամի յե նա... (Նաստյան թեյամանը զնում ե կրակին):

Նասյա — Եղ ում մասին ես խոսում: Եղ Սավելսկու:

Կատյա — Եղ թողնենք, ընկերներ.

Նասյա — Ճանաչում եմ նրան. քարշ ե գալիս կատյուշայի յետեկից, պղտորում ե բանվորի հոգին... Զութակով հարթություն ե տանում: Խորամանկ սատանա: Հետ ածա, կատյա, հին ավելով դուրս քշիր, վոր քո պղոլետարական շեմքից աղայական հոտ չգա...

Սաւա — Լավ, նաստյա, քո գործը չե:

Նադյա — Այնուամենայնիվ ավելի լավ ե պարզել այս հարցը... Ցցվել ե մեր մեջ և ծանր դրություն ստեղծել. Սիր ինչքան թանգ ես դու մեզ համար... Դու ամենամաքուրն ես, շնորհալին, և մերն եյիր հոգով ու մարմնով... Քեզ գնահատում են, սիրում... Շատ վատ կլինի, յեթե սառչես, սատանան տանի: Մեր կոմմունայի համար քո ամբողջ հոգին պարզ եր... Դու միշտ անբիծ եյիր, պայծառ...

Նասյա — Ե՞ր, բայց անցավ...

Կատյա — Ինչի համար եք խոսում եղբան... Զերն եյի, ձերն եմ և ձերը կինեմ... Ցեվ մեր մեջ վոչինչ չկա: Պըոֆեսոր Սավելսկին պարզապես իմ բարեկամն ե... Զեվոր յես իրավունք ունիմ բարեկամ ունենալու:

Սաւա — Նայած թե ինչպիսի:

Կատյա — Այդ ինտելլիգենտները ինձ վրա չեն ազդում: Ցես ամուր եմ և սառչել չեմ կարող. Նադյա, լսիր: Ցես գործարանումն եմ մեծացել... բայց միթե յես մեղավոր եմ, վոր տաղանդ ունիմ... Իսկ նա... են... յերաժշտությունը ըմբռնում ե, սովորեցնում ե ինձ, նոտաներ ե բերում... Ցես ու նա շատ-շատ ենք խոսում արվեստի մասին... Զե վոր դա միակ ըոպեներն են, վոր յես ապրում եմ դրանով.. իմ ջութակով... Ինչպես չեք հասկանում:

Սաւա — Տես, նադյան լաց ե լինում:

Կատյա — Եհ, դե լավ դուք ել...

Իգնատ — Կատյա... Ցես արդեն ասացի... Ինչպես ըութակին... քեզ ել եմ սիրում սոսկալի... և չեմ հասկանում: Դու ներիր ինձ:

Կատյա — Ախար ի՞նչը ներեմ:

Իգնատ — Մի բարկանար... ինքդ գիտես... Ցես կարծում եյի, թե իսկապես սիրում ես, բայց եղ անցավ... Ցես միենույն ժամանակ չեմ հավատում... վոր դու հեռացար ինձնից... Զեմ հավատում. դու շատ ես մերը... դու չես կարող թողնել մեզ: Ե, իսկ իմ գլուխը տաք ե և չեմ կարող տանել քո այդ յերկությունը... կուսակցության և ջութակի միջև... Մեր, իմ և... նրա միջև... այ, ասա հիմա, կատյա, բոլորի ներկայությամբ ասա... Զես հեռանալ մեզանից... Զես հեռանալ, կատյա:

Կատյա — Թող քո եղ զգայականությունը. քեզ չի սազում... Եղ վոր ախմախն ե ասել քեզ, թե յես հեռանում եմ... Ինչո՞ւ յես վիրավորում ինձ... Զեզ նվ ե ասել...

Իգնատ — Պրոֆեսորը:

Կատյա — Նա. Նայե ասել... Լսեցեք, ինչո՞ւ յեք տանձում ինձ... Զե վոր ամեն մի հիմարի համար ել պարզ ե, վոր եղ Սավելսկին ձեր համեմատությամբ վոչինչ ե:

Նասյա — Այ, հենց բանն ել եղ ե, վոր եստեղ հիմարներ չենք. այլ խելոք մարդիկ:

Նադյա — Դե լավ, հերիք ե... Կատյան մերն ե և ել խոսք չի կարող լինել:

Սաւա — Ինարկե... Կատյա, մի զայրանար... Մենք սիրում ենք քեզ: Ցես ինքս գնացի եղ ճաղատ սատանի մոտ և քո ջութակը բերի... դե, նվագիր... դե, թաթիկդ տուր, հաշտվենք...

Նասյա — Արի, արի, սիրելի ընկերուհի, մի բարկանար... Ցես ամբողջ գործարանի փոխարեն պատասխանատու յեմ, վոր սիրում ենք քեզ և

Կատկան մերն ե (կոմմունարները, բացի հզնատից, բարեսրտությամբ շրջապատում են նրան յեվ գրկախառնվում Կատյային։ Սա ծիծաղելով ազատվում ե նրանց ողակից)։

Կատյա — Դե՛ լավ, դուք ել... թողեք, սիրելիներս, թողեք։

Սաւա — Ա՛յ, եսպես պետք ե անել սրան, — վոր ել մեզ չդավաճանի։

Կատյա — Ա՛յ ավազակներ, քիչ եր մնում խեղղեյին։ Դե՛ լավ, փոխը կհանեմ. սպասեցեք, սատանաներ։

Նասյա — Դե՛, դե՛, կատերինա։

Սաւա — Տղերը, բանի վոր Կատկան անառակ վորդու պես յետ ե յեկել մեր կոմմունարների ընտանիքը — պետք ե... պետք ե մի բան յերգել (յերգում ե. մյուսները միահամուռ ծայնակցում են) — Աշխատավոր մարդկանց դավակ, մենք բոլորս ժողովրդից... (կամ մի այլ յերգ)։

Չուդով (մտնելով) — Սպասեցեք, սիրելիներս.. Կատյուշա, քեզ են հարցնում... նայե... են... ինքը... Սաւա — Անժամանակ յեկավ. — Սավելսկին։

Չուդով — Ա՛յ, այ, հենց նա յե... Պրոֆեսորը... (զընում ե. ժամանակավոր լուսթյուն)։

Իգնաս — Յես գնացի։ (Սաշային) Գնանք։

Կատյա — Լավ, ի՞նչ պատահեց. — դազան հո չի։

Սաւա — Սպասիր ելի, պարզնի հետ կխոսենք։

Իգնաս — Յես չեմ կարող... Մի վորեե բան կանեմ... (ուզում ե գնալ, բայց կանգ ե առնում։ Մտնում ե Սավելսկին։ Հանգիստ ե ու գեղեցիկ)։

Կատյա (ընդառաջ ե զնում) — Բարի յերեկո։ Ես իմ ընկերներն են... Նստեցեք այստեղ, ձեզ համար թեյ կածեմ... Զլինի դուրսը ցուրտ ե։

Սավելսկի — Այն, ցուրտ ե։

Կատյա — Իսկ մենք հենց նոր վիճում եյինք... թե կոմմունիստն իրավունք ունի՞ արվեստին նվիրել, յերբ...

Նասյա — Յերբ հարավից Դենիկինը հուպ ե տալիս։ Սավելսկի (մեղմ) — Կատերինա Վասիլևնան մնաց փոքրամասնության մեջ։

Նադյա — Վոչ... Մենք միաձայն վորոշեցինք, վորբանվոր-կոմմունիստը, նույնիսկ յեթե յերաժշտությամբ ե զբաղվում, այնուամենայնիվ նա յերբեք չի կարող հեռանալ մեզանից... Յեվնրաստեղծագործությունն ել հեղափոխությանն ե պատկանում։

Նասյա — Դե՛, իհարկե, Կատյուշան բանվորուհի յե, նա բանվոր ե, և բուրժուազիան նրա վրա վոչ մի իրավունք չունի... ահա մեր վորոշումը, պարոն պրոֆեսոր։

Սավելսկի — Յես չեմ զարմանում, թանգագին ընկեր։

Իգնաս — Ընդհանրապես այդ մեզ դյուր չի գալիս... Յես ձեզ խորհուրդ կտայի, բաղաքացի... Սաւա (կտրելով) — Դե՛, տղերք, ամոթ պետք ե ունենալ։

Նասյա — Գնանք... Ասացինք, պղծանք ... Ուրիշ հերթն ե.... ցտեսություն, կատերինա։

Իգնաս — Սպասիր, ինչու չթողեցիր, վոր խոսեմ։

Սաւա — Թող, լավ, գնանք։

Իգնաս — Յես խոսք եմ խնդրում։

Կատյա (կտրուկ) — Դե՛ ասա։

Իգնաս — Կատյա, զու յել չհամարձակես խոսել լավ բարեկամների մասին... Յեվ այդ բարեպատեհ խոսակցությունները յերաժշտության մասին, և նման բաները... սուտ ե։ Յես չեմ հասկանում յերաժշտությունը, բայց զգում եմ, վոր սուտ ե, բոլորը սուտ ե... Եստեղ բոլորովին ուրիշ բան կա. . Իսկ խոսակցությունները, դա խեղճերի ոգտին ե... Նասյա — Այդ ճիշտ ես ասում։

Իգնաս — Յեվ ձեզ ել, բաղաքացի Սավելսկի, յես խորհուրդ կտայի... չստել։

Սավելսկի (կանգնելով) — Ներեցեք, բայց դա չափա-  
զանց...

Իզնատ — Իսկ յես, կրկնում եմ...

Կատյա — Իգնատ, չհամարձակվես...

Իզնատ — Դուք ինչու յեք գալիս այստեղ... յերա-  
ժըշտություն սովորեցնելու, գեղեցկության  
վարժեցնելու, վոգերության, տիեզերական  
համաչափության նուրբ ըմբռնմանը... (ծիծա-  
ղում ե): Եղ ում եք ասում: Ընկեր Չուղովան  
բանվորուհի յե... նրբություններով նրան գրա-  
վել չի լինիլ... Քայքայված հոգի, դուք եստեղ  
մի փնտուեք... այլ մի ուրիշ տեղ... իսկ ձեզ,  
այդ չե, այդ չե հարկավոր... Կատյայի սիրտը  
չի, տաղանդը չի... Յես կրկնում եմ, սուտ եք  
ասում... Զեզ ինքը Կատյան ե պետք: Իհարկե:  
Նա մի ուրիշատեսակ ե (ծիծաղում ե): Ի՞նչ ես  
գլխարկդ վերցնում... ավելի լավ ե ատրճանակ  
վերցնես:

Նադյա — Իգնատ, ի՞նչ ե պատահել քեզ:

Իզնատ — Ասենք, յես ինչ գործ ունիմ, այս բոլորի  
ցեխի հետ... մնաք բարե... (արագ շոտ ե գալիս  
յեվ գնում: Պառագա):

Նաստյա — Այ, ներկեց ում հարկավոր եր հա...  
յես ել եմ գնում... մնաք բարե, Կատյա:

Նադյա — Կատյա, ի՞նչ ես անում:

Կատյա — Վոչինչ... այնպես... Նադյա, քո ճամփի  
վրա յե... նեղություն կրիր (թղթապանակի մեջ  
փնտում ե), այ այս հրահանգները... Մտիր  
պատգամավորուհիների հանրակացարանը, բա-  
ժանիր նրանց... Վաղը նրանք ցրվում են...  
Յես ինքս եյի ուզում տանել...

Նադյա — Վոչինչ, տուր, յես սիրով. իմիջի այլոց  
զրույց ել կանեմ...

Նաստյա — Իսկ հետո հավաքվեցեք ինձ մոտ... թթու  
ու բիշի կուտեցնեմ ձեզ. բաժինս ստացել եմ:

Սաւա — Ե՛, լավ քեֆ կանենք... ց'տեսություն,  
Կատյա. մի հուսահատվիր: Ամեն ինչ կհարթ-  
վի... Իգնատից ել մի նեղանար...

Նաստյա — Նեղանալու ի՞նչ կա: Նա ուղղամիտ  
մարդ ե:

Սաւա — Դե, դե, գնում ենք, ի՞նչ ե, աղջիկների մոտ:  
Ինձ համար իսկական քավարան եր ընթրիքից  
առաջ (Սաշան յեվ յերկու աղջիկները գնում են):

Սավելսկի — Ե՛, յերկում ե, վոր իմ գնալու ժա-  
մանակն ել ե:

Կատյա — Սպասեցեք... Զեզ ինչ վոր բան եյի ու-  
զում ասել...

Սավելսկի — Ել ի՞նչ ե մնում, Կատյա, դու միան-  
գամայն նրանցն ես. կյանքը ձեզից և դուք  
կյանքից վոչինչ չունիք ստանալու.

Կատյա — Միթե իգնատը...

Սավելսկի — Վոչ, խոսքը նրա մասին չե... Նա  
միայն տանջվում ե... Նրա համար կարեորն  
այն չե, վոր դուք յերաժշտությանը նվիրված  
ըսպեներին հեռանում եք կուսակցությունից...  
վոչ... Նրա համար ծանը ե, վոր դուք իրենից  
եք հեռանում... իսկ այդ... միենույն ե, ան-  
խուսափելի յե... Յեվ նա չի յել ուզում, վոր  
դուք պրոլետարական մումիա լինեք:

Կատյա — Ուրեմն ի՞նչ:

Սավելսկի — Այ, այս ե ձեր կուսակցությունը...  
Զեզ թույլ չի տալիս արվեստով զբաղվել:

Կատյա — Յերեմն կյանքը չափազանց ուժեղ ե  
կանչում դեպի ինքը, Իգոր Վլադիմիրովիչ.  
իսկ յես այդ կյանքի հենց մեջտեղից եմ: Յեվ  
այ, յես թույլ չեմ տալիս ինքս ինձ ջութակին  
նվիրվել: Դրա ժամանակը չե:

Սավելսկի — Իսկ ապրել, դուք թույլ եք տալիս ձեզ:

Կատյա — Ապրել հեղափոխության համար, ամբոխի  
մեջ...

Սավելսկի — Կատյա. չե՞ վոր այդ բոլորն այն չե,  
ինչ վոր դու ասում ես... Յես խսկական կյանքի  
մասին եմ ասում... անհատական կյանքի...  
Չե՞ վոր վոչ մի հեղափոխություն չի դիմանալ,  
յեթե անհատը չի ապրում նրանով, ծնելով այդ  
կյանքը և շուռ գալով նրա մեջ:

Կատյա — Դուք ձեր մասին եք ուզում խոսել: Այն  
ժամանակ իմ իգնատը ճիշտ եք ասում.

Սավելսկի — Նա ձերը չե: Բայց խսկապես նա ճիշտ  
եք ասում: Յես սիրում եմ ձեզ: Լսեցեք, թե  
յես ի՞նչ եյի ուզում ասել ձեզ վաղուց: Յես  
չեմ հրաժարվում իմ սիրուց: Նա ինձ լուսա-  
վոր վոգերություն ե տալիս, նա ինձ ցավ չե  
պատճառում... Յերեկ գնալիս յես նայեցի քո  
աչքերին... և տեսա այնտեղ այն, ինչ վոր ինձ  
տանջելու չափուրախացըրեց: Այ, կհպվեյի ձեր  
շրթունքներին, աչքերին, կհամբուրեյի... ու-  
րախ և կրակոտ ձեր գեմքը, կուրծքը, ուսերը...  
հոգիդ կհանեյի... Միթե սա լավ չե, վատ ե:  
Միթե դուք չեք սիրում ինձ: Վոչ գեղեցկու-  
թյուն եք ուզում, վոչ փաղաքշանք: Միթե  
դուք կարող եք հրաժարվել այն հսկայական  
յերջանկությունից, վոր յես կտամ ձեզ: Մի-  
թե... Կատյա:

Կատյա — Յես հրաժարվում եմ... Յես արդեն վորո-  
շել եմ ամեն ինչ: Մեր ճանապարհները տար-  
բեր են... Լսում եք: Մեր սերը չի կարող յեր-  
կար տեսել. այստեղ գասակարգային թշնաման-  
քի թույն կա... Յես շուտով կդադարեմ սիրե...  
Ու միայն մտքիս մեջ դառն հիշողություն կը-  
մընան, իսկ սրտիս մեջ միայն վերըեր... Յես  
հրաժարվում եմ, յես չեմ ընդունում այդպի-  
սի սերը:

Սավելսկի — Չի կարող պատահել: Միայն գարշելին  
ու այլանդակն ե յետ մղում սերը: Իսկ յես

ձեզ սիրում եմ այնպես, ինչպես դուք ջութա-  
կը: Նույնիսկ ավելի: Յես կբարձրացնեմ ձեր սե-  
րը, ձեր սերը այս կնդընդոցով: Յես քեզ չափա-  
գանց շատ որեր կնվիրեմ, շատ ուշադրություն,  
վորպեսզի ոգնեմ քեզ... բարձրանալու ստեղծա-  
գործության այն բարձրությանը, վորի մա-  
սին մենք շարունակ խոսում եյինք: Յեվ դա  
միենույն կյանքը կլինի, միայն ավելի հարուստ,  
ավելի խոր և ավելի գեղեցիկ:

Կատյա — Ինչու համար ե այդ բոլորը: Իմ և ձեր մի-  
ջև նույնպիսի անդունդ կա, ինչպիսին կա ձեր  
և հեղափոխության միջև: Յես բանվորուհի յեմ:

Սավելսկի — Այդ նրանք են այդպես ասում, Կա-  
տյա: Հրաշագեղ կին, մանկիկ իմ. դուք շեղեցիք  
իմ հանգիստ ճանապարհը, փշեցիք իմ ապա-  
գան, դուք... գիտեք: Այսոր իմ կինն ու  
յերեխան—նրա ծնողների մոտ գնացին:

100  
2  
3  
4

Կատյա — Ինչու համար:

Սավելսկի — Յես նրան ասացի, վոր նոր կյանք եմ  
սկսում... Դա մահ կլինի, յեթե դուք հեռանաք  
ինձնից... Բայց չե՞ վոր յես զիտեմ... Յես չա-  
փաղանց լավ զիտեմ, վոր իմ ասածն ե ճիշտը:  
Դուք սիրում եք ինձ, Կատյա, Կատյա... դեռ  
սրանից յերկու—յերեք ամիս առաջ այս բոլո-  
րը իմ աչքում պղծություն, վայրի մի բան  
եր... իսկ այժմ, սա իմ վոգերության որհ-  
նանքն ե: Սա դեպի քեզ տածած իմ անկեղծ,  
աննման ու խելանեղ սերն արավի... Կատյա,  
սուտ մի ասեք, դուք սիրում եք ինձ...

Կատյա — Իհարկե սիրում եմ, իդոր, իհարկե սիրում  
եմ:

Սավելսկի — Պարզ ե, պայծառ ու արդար... Միթե  
սա լավ չե (համբուրում ե նրան):

Կատյա — Յես կորա...

## F. ԳՈՐԾ.

Բանվորական ակումբի մի մեծ ու գեղեցիկ սենյակ։ Աջ կողմի դրուը տանում ե դեպի հանդեսի դամբճռ։ Բանվորներն ու բանվորութիւները տոնական շրջեր հազած ներս ու դրւս են անում։ Բեմի յետեվը լսվում ե յերաժշտություն։ Զախ կողմից մոնում ե Սաշան։ Աջ կողմից նրա դեմ ե զալիս Նայյան։ Յերկուան ել վնտոսս են մեկին յեվ հանդիպում են իրար։

Սաշա — Ա՛, եղ դժւ յես, կոմիտետապետ. բարե, Նայյա։

Նայյա — Ես ի՞նչ ե, Զուդովան չի յեկե՞լ։ Շուտով պետք ենվագի։ Զես իմանում, Գուցե հիվանդ ե։

Սաշա — Բան չունիս։ Սրանից կես ժամ առաջ տեսա. Պրոֆեսորի նետ, մի լավ սահնակով գընում եր. Յետեկից գնում ե կոնսերվատորիա, տանում ե տուն։ Յես կարծում եյի, թե այստեղ ե արդեն, բայց չկա... ժամանակ չունի, արտիստկա յե, զբաղված ե։

Նայյա — Ծիծաղելու բան չկա, այնպես տանջվում ե նա։

Սաշա — Նա՛, տանջվում ե. Դե թող դեն շպրտի իր գիտնականին. Ինչի՞ համար ե կապիել նրա հետ. Միայն քայլքայում ե կոմմունան։ Ե՛, գըրողը տանի նրան (արագ գնում ե)։

Նայյա (Սրա յետեվից) — Միայն խանդում ես, ուրիշ վոչինչ։ (Կատյան շտապ, շնչառապո, ջոթակի բունը ձեռքին մոնում ե)։

Կատյա (Նյարդային) — Նայյա, հոգիս (ոգում ե ընկնել նրա վրա, բայց հանկարծ կանգ ե առնում յեվ շտապով հանում ե մուշտակը։ Հազնված ե պարզ։ Յածրածայն) Մոտի՞կ ե իմ հերթը։

Նայյա (Քնքույշ) — Իսկույն... սառե՞լ ես։ Ինչու ուշացար, վոտքով եյիր։

Կատյա — Այս... վնչ... սահնակով։

Նայյա — Սավելսկու ուղեկցությամբ։

Կատյա — (Սառը) տաքանալու տեղ չունիս. Դուրսը սառնամանիք ե... այստեղ ել... (Նյարդայնորեն ծիծաղում ե)։

Նայյա — Ակումբը տաքացըրած ե. Ա՛յ, վառարանից ձեռքերդ տաքացըրու, միայն շուտ։

Կատյա — Թե չե. յերբ մատներդ սառած են, նվագել չի լինիլ։

Նայյա — Դու դեռ ելի ձեռնոցներ չունիս։

Կատյա — Վորտեղից ե ինձ։ (Նկատելով Նայյայի հայացը)։ Ուրիշ բան չկարծես. յես իգորի հաշվին չեմ ապրում. Յես սիրուհի չեմ։

Նայյա — Այդպես ե թե չե, բայց դու հիմա բոլորովին ոտար ես. Քեզ ինտելիգենտ են դարձըլել. Ել կոմմունիստի նման չես։

Կատյա — Ե՛, դա իմ բանն ե։

Նայյա — Սատանան գիտե, թե կուռակցական աշխատանքներդ ինչպես ես կատարում... սա յել քո գործն ե։

Կատյա — Թող, Նայյա, առանց այն ել հյուծվել եմ, հավանական ե, չպիտի կարողանամ նվագել։

Նայյա — Դե, եղ արդեն կներես. միայն թե շխայտառակես. Զե՞ վոր եսոր դու պետք ե փայլ տաս համերգին. Բոլորս միայն քեզ ենք սպասում... բոլոր բանվորները, ինչքան ել այդ տարրինակ ե, քեզ են սպասում...։

Կատյա — Ա՛յ, բանվորները հասկանում են ինձ. Նըրանք ինձ վրա նայում են և իբրև ընկերոջ և իբրև գեղարվեստագետի վրա. Յեվ դրա համար ել սիրում են. Իսկ դուք, այ...։

Նայյա — Սիրում են, քանի դու իրենց հետ ես, քանի դեռ չգիտեն, վոր դու մեր շարքերից դա-

սալիք ես (արագ շոտ զալով, զնում եւ Կատյան տանջվելով հոգոց եւ հանում յեկ նայում եւ նրա յետեվից: Մի առ ժամանակ մոտ եւ մոտախոր: Սաշան անցնում ե):

Սաւա — Բարե:

Կատյա — Հա... այդ դու յես:

Սաւա — Վաղուց եւ չենք պատահել:

Կատյա — Յերեք-չորս շաբաթ կինի:

Սաւա — Իսկ ինձ թվում եր, թե յերեք տարի յեւ: Շատ ջուր անցկացավ... ինչքան գունատվել ու նիհարել ես... (պատզա):

Կատյա — Իգնատի մասին... վոչինչ չես լսել—Քը-ըռնտից:

Սաւա — Իգնատի մասին... յերեկույթից հետո կասեմ:

Կատյա (անհանգիստ) — Վատ լուր կա... Համ, Սաշա:

Սաւա — Լավ, վոչինչ... հետո (զնում ե, Կատյան զընում ե նրա յետեվից. Նաստյան մոտ ե վազում):

Նաստյա (բանվորներին) — Ընկերներ, Չուղովան յեկավ: Ուր ե ընկեր Չուղովան:

Կատյա — Նաստյա, Նաստյա (ծեռքը մեկնում ե: Նաստյան յետ ե նայում, բայց ծեռքչի տալիս):

Նաստյա (սառը) — Ա՛, դուք այստեղ եք: Զեր հերթը ե, ինդրեմ:

Կատյա (ցածր) — Սատանան տանի... (մի նայացք ծըգելով նրա վրա, վերցնում ե ջութակը յեկ շտապ զընում ե ղետի աջ):

Նաստյա — Կարծես արտիստկա լինի:

Մի բանվոր (մոտենալով) — Ընկեր Նաստյա, եղ ինչ ե պատահել Կատյա Չուղովայի հետ. Կարծես մեկը նրան փոխել ե. չի ճանաչվում:

Նաստյա — Մի բուրժույի հետ ե ընկել, այքեղ փոխել: Նա ինչ բանվորուհի յեւ: Արտիստկա յեւ (աղաղակում ե). Ընկերներ, Չուղովան նվագում ե, գնացեք, լսեցեք ձեր սիրելուն (բանվորներն ու-

րախ խմբով զնում են աջ): Իսկ յես արդեն չեմ գնալ... աչքիս ցավ ե տալիս... դավաճան (բեմի յետեվից ծափահարություն, լսվում են ջութակի մեղմ, տխուր հնչյունները — տանջող յեկ հեկեկող): Դրանով վերջին բարեն ե ասում մեզ... հի, աստված, ինչ ծանր ե... (լսվում են կեղծ հնչյուններ: Պատզա: Նորից կեղծ նոտաներ: Աղմուկ, սուրոց... Սաշան աղաղակում ե. «Ընկերներ, կամաց»: Հանգիստ ե: Կատյայի ծայնը. — «Ընկերներ, չեմ կարող նվագել»... Աղմուկ: Նաստյան անհանգիստ լսում ե: Բանվորները աղմկով, դժգոհ խմբով մնում են սենյակ):

Նաստյա — Սա ինչ ե, ինչ պատահեց:

Բանվորներ — Քո յերաժշտուհին խայտառակվեց:

— Ասում ե չի կարող նվագել:

— Մոռացել ե:

— Հիշողությունը խարեց:

— Նյարդերը քայքայվել են,

— Իգուր յերեկույթը փչացըց:

— Հրաշալի յեւ: Սա իսկի Կատկան չե, այլ ինչ վոր տիկին:

— Ասում ե «չեմ կարող նվագել»:

(Մեկը յերգում ե)

Այ տիկին տիկին,

Շատ ես անց կացել (կամ այլ յերգ):

Շաքար շատ ես կերել...

Սաւա (դահլիճում) — Ընկերներ, մի ցըվեք: Կարմիր ֆրոնտից լուրեր կան (Նաստյան յեկ բանվորները զնում են դահլիճ, փորտեղից դուրս ե զալիս Կատյան գունատ, տանջված, ընկնում ե աթոռին. ջութակն ու բունը ընկած են հատակին):

Բանվորներ (բեմի յետեվլ) — Ընկերներ, մի ցըվեք:

— Ելի ինչ կա:

— Լավ յերաժշտություն խոստացան, են ել չկա:

— Սաշա, մաս:

Սաւա (բեմի յետեվլ) — Հենց նոր հեռագիր ստաց-

վեց, վոր մերոնք շարունակում են վճռական հարձակումը, Դենիկինի զորքը գլուխը կորցրած փախչում եւ Կարմիր բանակը մտել եւ Դոնեցի ածխահանքի շրջանը:

Բանվորներ (քեմի յետեվը) — Ուռա, կեցցե... (ուռախ աղմուկ):

Սաւա — Ելի մի նորություն, ընկերներ... մի վոչ ենքան ուրախ, նույնիսկ ցավալի... սպիտակների դեմ մզած կովում, կոմմունիստի և պրոլետարի փառավոր մահով ընկել եւ մեր բոլորիս բարեկամ և ընկեր իգնատը:

(Հոռոման: Կատյան վեր եւ կենում յեվ դռան մոտ աղաղակում):

Կատյա — Իգնատը... Իգնատն սպանվել ե...

Սաւա — (քեմի յետեվը) Այն, սպանվել եւ Հոտնկայս հարգենք ընկերոջ հիշատակը (վեր կենալու աղմուկ: Պառագա: Սկսում են յերգել թաղման քայլերը: Կատյան դռան սեմին հենված, կանգնած եւ Զախ կողմից մտնում եւ Սավելսկին, մուշտակը հագին, ձեռնափայտը ձեռքին):

Սավելսկի — Այստեղ ես, Կատյա... Նվազեցիր, վերջացրիր...: Ինչու չես պատասխանում, Վահ, ի՞նչ ե պատահել քեզ... Կատյա, լավ չես զգում քեզ: Հիվանդ ես, սիրելիս... (ականջ դնելով) Հըմ... դա ի՞նչ են յերգում. թաղման քայլերգ...

Կատյա — Գնանք, գնանք շուտով, լավ չեմ... (Սավելսկին քնքությամբ նրա թելն եւ մտնում յեվ տանում ե ակումբից: Աչ դռան մոտից Նաստյան ցավով ու ատելությամբ լի հայացքով ուղեկցում ե նրանց. մտնում ե Սաշան):

Սաւա — Գնաց...

(Վարագույր)

#### Գ. ԳՈՐԾ.

Գարնան որ եւ Պրոֆեսորի տանը-Կատյայի շքեղ սենյակ, զեղարվեստի ամեն տեսակ արտադրություններով զարդարած: Փառահեղ կազմով գրքեր, նոտաներ, նվազարան, ծաղիկներ, թեթեվ, պարզ գոյնի կահավորություն: Մենյակի ընդհանուր արծաթափայլ ֆոնի մեջ քնքույց հակադրություն ե կազմում մեծ, սեվ ճոճածոռը (բառակա): Մեծ պատուհաններ, շղարշե ծաղկանկար վարագույրներով: Գրասեղանի վերեվը պատից կախած են կոմունիստական կուսակցության ղեկավարների նըկարները: Դիմացը մի լայն դրույք դեպի սեղանատուն, դեպի ծախը վարագուրած դրույք դեպի ննջարան: Կատյան առաջվա նման պարզ հազնված, բայց միանգամայն հրճվանքով, ջութակը ձեռքին կանգնած ե նվազարանի մոտ, վորի առաջ նստած ե Սավելսկին:

Սավելսկի — Դու այսոր լավ ես տրամադրված, Կատյա: Յերեկոյան քո համերգը փառավոր բան կլինի:

Կատյա — Դե լավ, աչք մի տալ: Բայց իսկապես շատ եմ վոգենորված: Եսոր յես կարող եյի միլիոնավոր մարդկանց առաջ նվազել:

Սավելսկի (քաշում ե նրան դեպի ինքը) — Արի մոտս, իմ սքանչելիս... Կատյա, գիտես, թե ինչ ե կատարվում ինձ հետ: Յերբեք այնքան սիրով լցված չեմ յեղել դեպի քեզ, ինչպես այժմ: Դուրսը գարուն ե, իսկ իմ հոգում, քառակուսի գարուն ե: Այս, մի միտք անցավ գըլխովս - տիեզերք. — և յես մտածեցի, վոր այսիսի ըովեներում կարելի յե հասկանալ, թե ինչ ե տիեզերքը — անպարփակ տարածությունը: Հասկանո՞ւմ ես: Վոչ, դու զգում ես. դա չի կա-

ըելի հասկանալ: Դա զգացումների մի ամբողջ շարք ե... Կատյոնցա, արեգակս, հարազատս... Կատյա — Լսիր, սիրելիս. դու ես անզամ կզամ համերգիս: Յես ուզում եմ զզալ, վոր դու նայում ես ինձ: Են ժամանակ կարծես ավելի լավ եմ նվազում: Հասկանում ես:

Սավելսկի — Ինչպես դու փայլուն ես, Կատյա...

Կատյա — Ընդհանրապես դեպի քեզ տածած սերս ինչքան շատ բան ե տալիս ինձ—ինչպես ստեղծագործող ե: Միրելիս... Յես քեզ մի բան կասեմ... միայն չծիծաղես: Գիտես, յերեկ, դու վոր դպրոցումն եյիր, յես մի յերեելի յերկի առաջի մասը զրեցի... Յես գիշերները լսում եմ այդ բանը—նա հետեւում ե ինձ... Յեվ ահա ըսկիզբը: Դա իմ սերն ե, դա նաև իմ տանջանքն ե... ամեն ինչ... Ուզում ես նվազեմ. (վերցնում ե շութակը) միայն աչքերդ փակիր, իսկ յերբ կը վոգեորդեմ, նայիր, նայիր ուղղակի հոգուս մեջ... (սեղանատնից մտնում ե Տարատվան):

Տարատվան — Պարոն, ենտեղ մի պարոն, Կատերինա Վասիլենային ե հարցնում:

Սավելսկի — Թո՛ւ, անժամանակ յեկավ... ասս' տանը չե:

Կատյա — Վհչ, վհչ, կանչեցեք այստեղ. (Սավելսկուն) խելազարվել ես. գուցե կոմիտեյիցն ե (Տարատվանից):

Սավելսկի — Քո կոմիտեյի ձեռքից հանդիստ ըուն չունիմ... Յես խանդում եմ քեզ, լսում ես, Կատյա: Եդ ձեր կուսակցությունը, վոր... (մտնում ե Սաշան: Կատյան անհանգիստ ընդառաջ ե զնում):

Սավեա — (առանց բարեվելու) Կարող եմ քեզ հետ առանձին խոսել:

Սավելսկի — Ներեցեք... (սառը զլուի տալով, զնում ե):

Սավեա (շուրջը նայելով) — Դու լավ սարքել ես այստեղ:

Կատյա — Դա գործին ե վերաբերում:

Սավեա — Կատյա, հիմա կոմիտեյի նիստը կրացվի. Նաստյան քո դեմ ահոելի պայքար ե մղում: Գիտեմ, վոր նա քո ամենալավ բարեկամից դարձել ե ամենաչար թշնամիդ... Հետոն, մենք լսեցինք, վոր եսոր դու նվազելու յես մի մեծ համերգում, ուր, գներին նայելով, կարող են լինել միայն բուրժուաները, միայն սպեկուլյանտները... դու սկսել ես ծառայել մեր թշնամիներին:

Կատյա — Ի՞նչ ես ուզում ինձնից:

Սավեա — Կզամ ժողովի:

Կատյա — Յես արդեն կոմիտեյի անդամ չեմ և ժողովների պարտավոր չեմ ներկա լինել:

Սավեա — Քո հարցն ե դրվելու, դա մի ամբողջ դատարան ե:

Կատյա — Մեղադրյալի անունով ծանուցագիր կա արդյոք:

Սավեա — Յես քեզ ընկերաբար եմ ասում:

Կատյա — Բայց յեթե ընկերները դատում են ինձ, նրանք պարտավոր են կանչել ինձ: Ինքս չեմ վագելու: Յես վախկուսներից չեմ, Սաշկա:

Սավեա — Մենք ենքան յերկար ու ենքան հաճախ խոսել ենք եղ մասին, վոր ել ինչ պաշտոնական նախազգուշացում կարող ե լինել:

Կատյա — Յես չեմ գալ: Թող դատեն, ինչպես գիտեն:

Սավեա — Իսկ յեթե քեզ մի վորե ե գյուղ ուղարկեն:

Կատյա — Ի՞նչ, ի՞նձ, ծիծաղում եք:

Սավեա — Ամենաին: Կոմմունիստների կուսակցական կարգապահությունը պարտավորեցնում ե կատարել այն բոլոր աշխատանքները, վոր պահանջում են կուսակցությունն ու բոլին:

Կատյա — Սաշկա, չե՞ վոր դու ինքդ պիտես, թե  
այստեղ ինչ նպատակ կա: Սավելսկին փշի  
պես ցցվել ե ձեր բոլորիդ աշըռւմ: Պարզա-  
պես դուք ուզում եք խորտակել իմ անհատա-  
կան յերջանկությունը:

Սաւա — Անհատական, անհատական... հւմն ե  
պետք: Իսկ դու, այ, թողել ես կուսակցու-  
թյունը և մոռացել ես քո պարտականություն-  
ները: Դու միայն կուսակցական տոմսն ես  
գրանդ դրել, դու միայն թղթի վրա յես կոմ-  
մունիստ—իսկ դա խայտառակություն ե, մա-  
նավանդ քեզ համար, վոր նախկին բանվորուհի  
յես:

Կատյա — Նախկին...

Սաւա — Այս, գործարանում դու արդեն բոլորի հա-  
մար ոտար ես: Ասենք իսկի չես ել լինում են-  
տեղ... դա—թե աշխատանքի և թե ինչ տեսակի  
ուզես—դասալքություն ե:

Կատյա — Սա՛կա, յես ուզում եմ միքիչ ապրել,  
ուզում եմ ապրել ուրիշ կյանքով, իսկ դուք  
շարունակ յետեկցս եք ընկնում: Չե՞ վոր յես  
կնիկ եմ, նվազող ել եմ, սատանան տանի:

Սաւա — Ուրեմն դու չե՞ս ուզում եսոր կոմիտեգալ:  
Կատյա — Վո՞չ:

Սաւա — Յեվ մտադիր ել չե՞ս թողնել այս բուր-  
ժուական ցըջանը:

Կատյա — Իգորին յես չեմ թողնիլ, բանի դեռ սի-  
րում եմ:

Սաւա — Յեվ չե՞ս վերադառնալ մեր կոմմունան...  
Կատյա — Միենույն ե, դուք ինձ դուրս կըշեք:

Սաւա — Հարցը պարզ ե: Մտիպված եմ այդպես ել  
զեկուցել կոմիտեյին: Դու կորած ես մեզ հա-  
մար:

Կատյա — Վո՞չ թե յես, այլ դուք եք ուզում ինձ  
թողնել:

Սաւա — Ե՛, Կատյա, շատ ծանր ե այդ մասին խո-  
սել... բայց պատկերն արդեն վաղուց ե պարզ-  
վել: Դե մաս բարե (Կատյան ծեռքը մեկնում ե  
նրան, նա չի բռնում յեվ զնում ե: Մտնում են Սավել-  
սկին, Աստրախանցեվը յեվ Թեղին):

Սավելսկի — Հը, գնամց... ելի՞ գրգռեցին քեզ:

Կատյա — Չե, վոչինչ... ամեն ինչ լավ ե:

Թեզի — Զուրը հանգստացել ե: Բարի որ, Կատերի-  
նա Վասիլենա:

Կատյա — Թեզի... բարե ձեզ:

Թեզի — Սա Աստրախանցեն ե, Կատյա, ինչ յեր-  
ջանկություն ե, վոր այսոր միասին պետք ե  
հանդես գանք:

Կատյա — Ի՞նչպես, միթե պարողուհի Լալան համա-  
ձայնեց քեզ ընկերակցել:

Թեզի — Յես և նա պարում ենք այս անձնավորու-  
թյան (ցուց տալով Աստրախանցեվին) հեղինակած  
«Մահվան ժպիտը»:

Կատյա (Աստրախանցեվին) — Ա՛, այդ դժւըք եք, բա-  
րեկամս, ամեն տեղ մտնում եք ձեր այդ վայ-  
րենի «Մահվան ժպիտի» հետ:

Աստրախանցեվ — Կոլլեգա՛, դուք ձեր մարքսիստա-  
կան ուղեղով հասկացեք: Իմ այս պոեմա-բա-  
լետում, ներկան միացրած ե բարեգարի հետ:  
Մարզը ինքը և գաղանը: Սերը իբրև բայրայ-  
ման վայրկյան, Յեվ այն ամենը, ինչ վոր  
սիրուց ե առաջ գալիս և ծառայում ե մահ-  
վան: Մահը պարագիտ ե, վոր ապրում ե սիրո  
հաշվին, Յեվ ստեղծել եմ իմ «Վոսկրե յեր-  
կինքը» և «Մահվան ժպիտը». — այսոր դուք  
կտեսնեք և կլսեք:

Կատյա — Մահը պարագիտ ե... նա ապրում ե սիրո  
հաշվին... ախմախ... ենպիսի սարսաղություն  
կասես, վոր մարդ խոսք չի գտնիլ: Բայց հե-  
տաքրքիր ե տեսնել, թե ինչեր ես դուրս տվել:

(Աղմակով մոնում են Լալան յեվ Նեժինան, զրկում են Կատյային յեվ առանց ուշադրության վողջունում են տղամարդկանց):

Լալա — Չուղովա, զավակս... Այսոր քո որն եւ Յես համաձայնեցի պարել, զավակս:

Նեժինա — Հարազատս, յես ձեզ պետք եւ Կատյա ասեմ, լավ: Հոգիս, ուրախությունից խելքս թոցը եմ: Ձեզ նման նվազող...ուղղակի...

Լալա (*Նստելով*) — Պրոֆեսոր:

Նեժինա (*Սովորելով*) — Պրոֆեսոր:

Սավելսկի — (ծիծաղելով): — Բարեկ ձեզ (համբուրում են րանց ձեռքը):

Թեզի — Իսկ վոտքերդ ինչպես են, Լալա:

Լալա — Ախ, յես նորից թաց արի: Ե, բարեկամս, յես այլևս չեմ կարող պարել քեզ հետ:

Թեզի — Դե, այ քեզ բան... Հին պատմություն եղա... արի այստեղ, իսկույն տաքացրնւ, խելապակաս:

Լալա — Այս, այս, սատանան տանի... (Բարձրանում են գանավորակի վրա: Թեզին նրա վոտքերը փաթառում են մորթով): Միշտ թաց եմ անում: Անվոտք կմնամ և կգնամ մուրալու... Ել չի լինի պարոհուղի Լալան:

Աստրախանցեվ — Իսկապես — պարողուհի Լալա:

Թեզի — Աշխարհը մի մեծ գեղարվեստագետ կկորցընի:

Նեժինա (*Կատյային զրկելով*) — Բայց ելի մի մարդարիտ կմնա:

Թեզի — Չուղովան նվազող ե, իսկ յերկրորդ պարողուհի Լալա չի լինի:

Լալա — Թոնզիկ, Թոնզիկ... եսոր դու գրավիչ ես...

Այս, իսկ Կատյան... Յես ուղղակի սիրահարված եմ Կատյային... նրա խաթրու յեմ պարում քեզ հետ, բարեկամս:

Թեզի — Շնորհակալ եմ:

Կատյա — Դա անակընկալ ե (տեմնում ե ներս մոնուղ Հանդեյին) — Ա՛, ահա բանաստեղծն ե զալիս... Հանդեն:

Նեժինա — Ա՛յ, այ, այ, բանաստեղծ Հանդեն յեկավ:

Թեզի — Տանջում ե մեզ իր վոտանավորներով:

Լանդե — Վողջնւյն, Յեվ այս աղմկարար հասարակությունը վախենում ե իմ վոտանավորներից:

Նեժինա — Վհչ... Իսկապես դուք վոտանավորները եք բերել:

Լանդե — Անկասկած:

Լալա — Ա՛յ սոսկալի բան:

Լանդե — Ներեցեք, այլ կերպ չեյի կարող: Զե՞ վոր յես պատրաստվում եյի յերեկույթի համար

(վոտանավորը տալիս ե Կատյային): Արվեստագետ Չուղովային ծոնում եմ իմ անմահությունը:

Կատյա — Շնորհակալ եմ բանաստեղծ: Սա տասներեքերորդ ծոնն ե:

Սավելսկի — Դու նյարդայնանում ես:

Նեժինա — Լանդե. դե՛ կարդացեք ձեր ոյինբազությունները: (*Ներս են վազում Յարովը յեվ Բարուշկինը*):

Բոլորը — Ա՛... ա... դերասանները, դերասանները...

Բաբուևին (*Կատյային*) — Հրաշալի՞ս. այսոր քո համերգին յես ել պետք եւ կուպլետներ ասեմ: Ինչպես ե առողջությունդ:

Յարով — Կատյա, իսկ յես գալիս եմ միայն տեսնելու և լսելու: Ձեր նվազածությունը ինձ խելագարեցնում ե:

Կատյա — Սիրելիներս... Յես այնպես ուրախ եմ...

Այս համերգը յերեկելի բան պետք ելինի: Բոլորս... յես այնպես վոգեորված եմ... յես ամբողջովին այրվում եմ... Յես ուժել չունեմ խոսելու (*զրկում ե Սավելսկուն*): Գիտեք, ինձ թվում ե, թե յես այսոր մի անսովոր ձեռվ

պիտի նվագեմ... այնպես, ինչպես յերբեք չեմ  
նվագել:

Յարով— Ինչպես յերբեք, վոչ վոք չի նվագել:  
Բարուչկին— Հըաշալին: Դու վոր նվագում ես, յես  
ուզում եմ պարել կամ դռուալ... Յերդվում եմ  
հանգուցյալ կնոջս գլխով:

Թեզի— Վոր յերբեք չի ունեցել:

Լալա— Նա հաղարն ունի:

Կատյա— Յեվ բոլորն ել հանգուցյալ:

Բարուչկին— Ուռուա... Նրանց մի հավատաք... այ,  
սպասեցեք... Յես մի բան հիշեցի (հանկարծ տե-  
ղիցը պոկ ե զալիս յեվ դուրս վազում. ծիծաղ):

Յարով— Հիմի ինչ վոր մի ոյին կապրեի... (Կատյային)  
Նա նույնիսկ ձեր կոշիկներին ել ե սիրահար-  
ված:

Նեժինա— Իսկ դու, միայն ըս ջութակին, չե (Յա-  
րովը լրտ համբուրում ե Կատյայի ծեռքը):

Լալա (Յածը, Թեզուն) — Դու կարծում ես եղ Փաբրի-  
կից դուրս յեկածը, կարող ե դուր դալ:  
Թեզի (Յածը) — Հըմ... իմ կարծիքով comm il-faunt—  
և հետաքրքիր ե:

Նեժինա (Յածը նրանց) — Հիմար կատակերգու-  
թյուն ե, ամենեին ել հետաքրքրական չե:  
Ենպես, ժողովրդից դուրս յեկած աղջիկ ե...

Կատյա (Յարովին) — Յես սովոր չեմ այդ բանին, և  
այ, հուզվեցի: Ինչըան լավն եք դուք, բոլորդ...  
Յարով — Մի հավատաք: Մենք բոլոր դերասաններս  
փշացած քաշեկողներ ենք և սատանի սրոցներ:  
Միայն և միայն: Իսկ դու... այ, մի հնչյուն  
հոգի յես...

Նեժինա — Կատյա, դուք յերկելի մարդ եք: Յա-  
րովը ճիշտ ե ասում հնչյուն հոգի յեք:

Սավելուկի — Կատյա, դու վայլում ես: Այսոր դու  
արկի յես նման:

Կատյա — Վհչ, յես ել չեմ կարող... Յես կնվագեմ

ձեզ համար. լավ: Թե չե չափազանց շատ եմ  
գոգմորված:

Բոլորը — Նվագեցեք, նվագեցեք (Կատյան վերցնում ե  
ջութակը յեվ Սավելուկու նվազակցությամբ ինչ վոր  
ուժեղ, կրքու ու նյարդային բան ե նվազում: Նա չի  
նկատում, վոր սեղանատան միջով գալիս ե Սաշան,  
իսկ Բաբուշկինը մի խործ վարդ ծեռքին կտրում ե նրա  
առաջը: Դերասանը յետ ե պահում Սաշային, նշանացի  
հասկացնելով, վոր նվազը չիսանգարի: Պատզայի ժա-  
մանակ ներս ե թռչում յեվ ծաղիկներով վրդողում ե Զու-  
ղովային՝ վոտքից զլուկ: Հիացմունքի ճիշեր: Պատզա):  
Կատյա — Տեր աստված, ինչպես լավ ե... (տեսնում ե  
Սաշային յեվ ինչ վոր մտքից հոգված ճռում):

Սաւա — Յես խանգարեցի:

Սավելուկի — Ի՞նչ եք կամենում:

Սաւա — Ներեցեք, կարևոր գործ ե:

Կատյա — Դե, ի՞նչ ե պատահել, շնոր, ասա:

Սաւա — Թիուլի եք տալիս (ցոյց տալով հուրերին):

Կատյա — Ասացեք (թափով ջութակը խփում ե հատակին:  
Քար լրություն):

Սույու — Զեզ հեռացրին կուսակցությունից:

Սավելուկի — Հեռացեք այստեղից (ընում ե Կատյային):  
Վատ ես զգում քեզ: Թիուլ... դրանք դատարկ  
բաներ են:

Կատյա — Դատարկ բաներ... Այն, այս բոլորը հիմա-  
րություն ե... (Նյարդային) Սաշա... ասա՛ ընկեր-  
ներին, վոր նրանք ճիշտ են դատել... Յես դա-  
սալիք եյի ձեր շարքերից... Յես դավաճանեցի  
կուսակցությանը... Յես կոմմունիստկա չեմ:

Սաւա — Դու դավաճանեցիր բանվոր դասակարգին:  
Սավելուկի — Կորե՛ք այստեղից, դա ձեր գործը չե  
(ընում ե Կատյային): Ուր ե գնում:

Կատյա — Ում ես դուրս անում: Չե վոր դրանով  
դու ինձ ես դուրս անում... Սպասիր, յես մի  
քեզ ջուր խմեմ...

Սալելսկի — Իսկույն կրերեմ...

Կատյա (Կորուկ) — Կա'ց, յես ինքս (զնում ե դեպի աշ):  
Բաբուկին (Նայելով գործիքին) — Իսկ ջութակը կոտըր-

վել ե... (Ննջարանում պայթյուն: Բոլորը վեր են  
թռչում: Սավելսկին ու Սաշան վազում են այստեղ:  
Մեկը ճշում ե: Սաշան դուքս ե զալիս ննջարանից յեվ  
սաստիկ կուչ յեկած արագ հեռանում ե սենյակից:  
Դուքս ե զալիս Սավելսկին, դողում ե ու շշկվել ե):

Սալելսկի — Նա... այնտեղ...

(ՎԱՐՍԳՈՒՅՑ)



12.560